ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ծաղկաձոր **28/06/2023**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Ասատրյանը, Հմայակ Խաչատրյանը, Արթուր Մելոյանը, Ռուբեն Սաֆարյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Նարեկ Հարությունյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գարիկ Բաղալյանը

Լսեցին
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 3-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի ԹԻՎ 8 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

1. Հաստատել Ծաղկաձոր համայնքի ավագանու 3-րդ նստաշրջանի 2023 թվականի հունիսի 28-ի թիվ 8 հերթական նիստի օրակարգը՝

1) Գումարը վերադարձնելու մասին.
2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 221-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 07-ի թիվ 41 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

4) Հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին.
5) Հենասյունների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին.
6) Դրամական օգնություն տրամադրելու մասին.
7) Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու մասին:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 65/

Լսեցին
ԳՈՒՄԱՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով Ռաֆիկ Առաքելյանի դիմումը

Ռաֆիկ Առաքելյանին վերադարձնել 2479201054230010 հաշվեհամարին ավել փոխանցված փոխադրամիջոցի գույքահարկի 4600 /չորս հազար վեց հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ գումարը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 66/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 221-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի <<Ծաղկաձոր համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին>> թիվ 221-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
1) Բաժին 4 խումբ 5 դաս 1 (ճանապարհային տրանսպորտ) հոդված <<5112>> (Շենքերի և շինությունների կառուցում) <<92000.0>> թիվը փոխարինել <<85744.3>> թվով:
2) Բաժին 4 խումբ 5դաս 5 (Նախադպրոցական կրթություն) հոդված <<5112>> (Շենքերի և շինությունների կառուցում) <<43744.3>> թիվը փոխարինել <<0.0>> թվով:
3) Բաժին 9 խումբ 2 դաս 2 (Միջնակարգ(լրիվ) ընդհանուր կրթություն) հոդված

<<5112>> (Շենքերի և շինությունների կառուցում) <<0.0>> թիվը փոխարինել <<50000.0>> թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 67-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 07-Ի ԹԻՎ 41 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 07-ի << Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին >> թիվ 41 որոշման հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 68/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի, 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշման հավելվածի 39-րդ կետի 1-ին ենթակետը՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնքի, Ծաղկաձոր քաղաքի վարչական տարածքում գտնվող, 0.06 հա (ծածկագիր 07-005-0016-0161) մակերեսով հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնքի, Ծաղկաձոր քաղաքի, վարչական տարածքում գտնվող, 0.04803 հա (ծածկագիր 07-005-0016-0136) մակերեսով հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 69/

Լսեցին
ՀԵՆԱՍՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 14-ի թիվ 66 որոշումը և <<ԷՖ ՆԵԹ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիմումը՝

1. Համայնքում ինտերնետային ծառայությունների հասանելությունը բարձրացնելու և ապահովելու նպատակով, թույլատրել <<ԷՖ ՆԵԹ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը մալուխների անցկացման աշխատանքների համար օգտագործել Ծաղկաձոր համայնքի, Ծաղկաձոր քաղաքի Սարալանջ թիվ 1 հասցեից մինչև <<Ծաղկաձոր Մարրիոթ>> հյուրանոց ընկաց ճանապարհահատվածի արտաքին լուսավորության 110 հենասյուներ :
2. Համայնքի ղեկավարին՝ <<ԷՖ ՆԵԹ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել համապատասխան պայմանագիր:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70/

Լսեցին
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 11-ի 128 որոշման հավելվածը և Հասմիկ Զալիբեկյանի դիմումը՝

Ծաղկաձոր համայնքի բյուջեի <<այլ նպաստեր>> 4729 հոդվածով նախատեսված ծախսերից տրամադրել դրամական օգնություն 500000 / հինգ հարյուր հազար / Հայաստանի Հանրապետության դրամ՝ Ծաղկաձոր համայնքի, Ծաղկաձոր քաղաքի Օրբելի եղբայրներ նրբանցք 2շենք 5 բնակարանի բնակիչ՝ Հասմիկ Զալիբեկյանին, Հայաստանի Հանրապետության առողջակահության նախարարության Վ.Ա . Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնում անհրաժեշտ բուժման ծախսերի լուծման համար:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 71/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Հողային օրենսգրքի>> 7-րդ հոդվածի 8-րդ մասով, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14.3 հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնքի, Արտավազ գյուղի վարչական տարածքում գտնվող՝ քաղաքացի՝ Դանիել Ժորայի Ջհանգիրյանին սեփականության իրավունքով պատկանող 0,1459հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքից (կադաստրային ծածկագիր 07-017-0134-0105, վկայական N05012023-07-0054) 0,1 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի, գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատմանհողամաս:
2. Սահմանել, որ հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության դեպքում անհրաժեշտ է վճարել հողամասի կադաստրային արժեքի տարբերությունը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 72/

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՀՈՎԻԿ ԳՈԳՈԼՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՂԱՐԻԲՅԱՆ

ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավար ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Գարիկ Բադալյանը